ՏԵՔՍՏԻԼ ԱՐՏԱԴՐԱՆՔԸ ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՌԵՎՏՐՈՒՄ (XIII–XIV դդ.)

ԶՈՀՐԱԲ ԳԵՎՈՐԳՅԱՆ

XIII դ. սկզբից Կիլիկյան Հայաստանը դարձավ միջերկրածովյան մեծ ընտանիքի անդամ՝ արագորեն ներգրավվելով նրանում ընթացող ինչպես քաղաքական, այնպես էլ տնտեսական բազմակողմանի գործընթացներին: Արևելք–Արևմուտք առևտրա-տնտեսական հարաբերություններում Կիլիկյան Հայաստանի դերը կտրուկ աճեց, երբ Չինգիզ խանի թոռ Հուլավուն 1258 թ. նվաճեց Բաղդադը, որն այդ ժամանակ Ասիայի խորքերից Մերձավոր Արևելք ձգվող առևտրային ճանապարհների գլխավոր հանգուցակետն էր: Հուլավուն հիմնում է Իրանի մոնղոլական պետությունը՝ Իլխանությունը և իր պետության մայրաքաղաք հռչակում Թավրիզը: Հենց վերջինս էլ դառնում է առևտրական ճանապարհների նոր հանգուցակետը, որտեղից դեպի Միջերկրական ծով դուրս եկող ճանապարհների գլխավոր դարպասն է դառնում Կիլիկյան Հայաստանի խոշորագույն նավահանգիստ Այասը: Այասից Թավրիզ և հակառակ ուղղությամբ ընթացող ապրանքաշրջանառությունն արագորեն աճում է, որի քննությունը կարող է փայլուն օրինակ ծառայել ընդհանրապես XIII–XIV դդ. Եվրոպայի ու Ասիայի միջև ընթացած առևտրական հաշվեկշռում շրջանառված ապրանքների տեսականու համար: Եթե Ասիայից դեպի Եվրոպա էին արտահանվում գլխավորապես համեմունքներ ու հումքային ապրանքներ, ապա հատկապես XIII դ. վերջից (Եվրոպայում ձեռնարկատիրական արտադրության զարգացմանը զուգընթաց) եվրոպացի վաճառականներն Արևելքի շուկաներ էին բերում տարատեսակ պատրաստի արտադրանքներ, ուր գերակշռում էր տեքստիլային զանազան արտադրանքը:

Հնուց ի վեր մետաքսը համարվել է Արևելք–Արևմուտք առևտրի ամենախորհրդանշական ապրանքատեսակը: Հին աշխարհում մետաքսի արտադրության մենաշնորհը պատկանում էր Չինաստանին: Սակայն Հուստինիանոս կայսեր (527–565) օրոք թթենու շերամը ներմուծվել էր Բյուզանդիա[1]: Իտալիայում մետաքսյա գործվածքների արտադրության առաջին հիշատակությունները վերաբերում են X դ. առաջին կեսին: XIII դ. Ֆլորենցիայից քիչ հեռու գտնվող տոսկանական Լուկա քաղաքը դարձել էր Եվրոպայի մետաքսի արտադրության գլխավոր կենտրոնը: Այն կլանում էր ջենովացիների կողմից Եվրոպա բերվող հումքային մետաքսի մե-

[1] *Տե՛ս* R. S. L o p e z. China Silk in Europe in the Yuan Period.– “Journal of the American Oriental Society” (New Haven), 1952, v. 72, № 2, p. 72.

ծագույն մասը[2]*: Չնայած XIII–XIV դդ. գյուղատնտեսական խորը ճգնաժամին՝ Իլխանության տարածքում թթենիների մշակման և միաժամանակ հումքային մետաքսի արտադրության ծավալները ոչ միայն չէին նվազում, այլև աճում էին*[3]*: Սկզբնաղբյուրներում հիշատակված են մոնղոլական պետության տարբեր շրջաններում արտադրված մետաքսի տեսակներ. բարձրորակ էր լեգին (*leggi *կամ* lezi*), որն իր անունն ստացել էր Գիլանի շրջանի Լահիջան քաղաքից: Հայտնի էին նաև Գիլանի (*seta ghella*), Մազանդարանի (*seta massandroni*), Թալիշի (*seta talani*), Շաքիի (*sicchi *կամ* sacchi*), Գանձակի (*canzia, cancia*), Շամախիի (*chamaki*) և մետաքսի շատ այլ տեսակներ*[4]*: Եվրոպացի վաճառականները մետաքս ներմուծում էին նաև հեռավոր Չինաստանից, որտեղ այն շատ ցածր գին ուներ*[5]*:*

XIII դ. 50–60-ական թվականների վերջից մինչև XIV դ. 40-ական թվականները Թավրիզից Այաս մեծաքանակ չինական մետաքս է ներկրվել: Այդ երկու քաղաքներում օգտագործված չափի ու կշռի միավորների համեմատության մեջ համեմունքներից անմիջապես հետո նշված է մետաքսը[6]*: Մի շարք հետազոտողների կարծիքով վերոնշյալ ժամանակամիջոցում Իտալիա և Ֆրանսիա ներմուծված չինական մետաքսի մեծ մասը ձեռք էր բերվել Այասում և սնծովյան որոշ նավահանգիստներում*[7]*: Ի դեպ, Իրանից Այաս և Տրապիզոն արտահանված հումքային մետաքսը և մետաքսյա հագուստը բարձր որակ է ունեցել*[8]*: Կիլիկյան Հայաստանի շուկաներում վա-*

---

[2] I. D e l P u n t a. Lucca e il commercio della seta nel Duecento.– Per Marco Tangheroni. Studi su Pisa e sul Mediterraneo medievale offerti dai suoi ultimi allievi, Pisa, 2006, pp. 99–127; A. M u t h e s i u s. Silk in the Medieval World.– The Cambridge History of Western Textiles, V. 1, Cambridge Un. Press, 2003, pp. 333–334.

[3] I. P e t r u s h e v s k y. The Socio-Economic Condition of Iran under the Il-Khans.– The Cambridge History of Iran, vol. 5, The Saljuq and Mongol Periods, ed. Boyle J. A., Cambridge, 1968, pp. 504–505.

[4] F r a n c e s c o B a l d u c c i P e g o l o t t i. La Pratica della Mercatura (*այսուհետև՝* P e g o l o t t i). New York, 1970, pp. 297–300; М а р к о П о л о. Книга. М., 1956, с. 58, 252; E. A s h t o r. The Economic Decline of the Middle East during the Later Middle Ages.– Technology, Industry and Trade. The Levant versus Europe, 1250–1500, Great Yarmouth, Norfolk, 1992, II, pp. 265–268; I. P e t r u s h e v s k y. *Նշվ. աշխ., էջ 504–505,* W. H e y d. Histoire du commerce du Levant au moyen âge, t. II, Amsterdam, 1967, pp. 670–673.

[5] R. S. L o p e z. *Նշվ. աշխ., էջ 75;* E. A s h t o r. Levant Trade in the Later Middle Ages, Princeton, New Jersey, 1983, p. 63.

[6] P e g o l o t t i, p. 30.

[7] R. S. L o p e z. *Նշվ. աշխ., էջ 74;* R. B a u t i e r. Les relations economiques des Occidentaux avec les pays de l'Orient au moyen âge.– Sociétés et compagnies de commerce en Orient et dans l'océan Indien, ed. M. Mollat, Paris, 1970, p. 291; M. B a l a r d. Genes et la mer Noire (XIII–XV siècles).– Revue historique, T. CCLXX, Paris, 1983, p. 35–36; С. К а р п о в. Итальянские морские республики и Южное Причерноморье в XIII–XV вв.: проблемы торговли. М., 1990, с. 115; M. L u c i d i. La seta e la sua via, De Luca, Roma, 1994, p. 38.

[8] С. К а р п о в. Трапезундская империя и западноевропейские государства в XIII–XV вв. М., 1981, с. 32.

ճառվում էին մետաքսի բազմաթիվ տեսակներ[9]*: Այսպես, Այասում 1277 թ. սեպտեմբերի 20-ին կնքված մի գործարքով Գրիմալդո Բեստանիոն կոմմենդայի պայմանագրով Օբերտո Պիկամիլիոյից պետք է ստանար մոտ 4036 հայկական նոր դրամ*[10] *(այսուհետև՝ հ. ն. դ.) արժեքով 1 ֆարդել*[11] *կշռով Ջիջերիոյի մետաքս (*seta de Gigerio*)*[12]*: 1214 թ. Լևոն Ա-ի կողմից Երուսաղեմի Հյուրընկալ ասպետներին վարձավճարով տրամադրված Կիլիկիայի մի շարք շրջանների թվում հիշատակված է նաև Ճկերի շրջանը, որը լատիներենով կազմված պայմանագրում նշված է* Giguerii *ձևով: Այն գտնվում էր Կիլիկյան Հայաստանի հարավարևելքում՝ Հայկական կամ Ալեքսանդրետի ծոցի ափին, որտեղ, անշուշտ, կարող էին զբաղվել շերամապահությամբ և մետաքսի արտադրությամբ*[13]*: Ջիջերիո տեղանվան մյուս տարբերակը կարող էր լինել մետաքսի արտադրությամբ հայտնի Իլխանության մերձկասպյան Գուրգան կամ Ջուրջան (*Gurgan, Djurdjan*) նահանգը*[14]*: 1277 թ. նոյեմբերի 2-ին Այասում ձևակերպված կոմմենդայի պայմանագրով Գվիլելմո դե Գրիգորիոն Գանդինո դե Մարիից ստանալու էր 2000 հ. ն. դ. արժեքով երկու տեսակի հումքային մետաքս՝* seta cancia *և* garldabam, *որոնք պետք է վաճառեր Աքքայում: Եթե* garldabam *տեսակն անորոշ է, ապա* cancia*-ն Գանձակից ստացվող մետաքսն էր*[15]*: Հիշատակված են նաև մուգ կարմիր գույնի (*seta chermisi*), նուրբ (*seta sottile*), ինչպես նաև բարձրորակ լեգին: Ընդ որում, վերջինի դիմաց հատուկ նշված է, որ այն ձեռք է բերվել Հայկական ծոցից, ամենայն հավանականությամբ՝ Այասից (*leggi del Golfo d'Erminia*)*[16]*: Իտալացի միջնադարագետ Իգնասիո*

---

[9] L. B a l l e t t o. Notai genovesi in Oltremare, atti rogati a Laiazzo da Federico di Piazzalunga (1274) e Pietro di Bargone (1277, 1279), Genova, 1989, B, N 17, 83; D. J a c o b y. Silk Economics and Cross-Cultural Artistic Interaction.– Byzantium, the Muslim World, and the Christian West, Dumbarton Oaks Papers, 58, 2004, p. 234; *Ն ո ւ յ ն ի՝* Mercanti genovesi e veneziani e le loro merci nel Levante crociato. Genova, Venezia, il Levante nei secoli XII–XIV.– Atti del Convegno, Genova – Venezia, 10–14 marzo, 2000, a cura di G. Ortalli, D. Puncuh, Genova, 2001, p. 240–241; I. D e l P u n t a. *Նշվ. աշխ., էջ 114, 120:*

[10] *Հայկական նոր դրամը սկսել է հատվել Լևոն Բ-ի գահակալության շրջանում: Այն Կիլիկյան Հայաստանի միջազգային առևտրական հարաբերություններում ամենից շատ օգտագործված դրամական միավորներից էր. դրանք 2,9 գր կշռով արծաթյա դրամներ էին: Հետագայում՝ XIV դ. առաջին քառորդում, նոր դրամի արծաթի պարունակությունը նվազեցվել է, որի հետ միաժամանակ այն սկսել է արժեզրկվել (տե՛ս Ղ. Ա լ ի շ ա ն. Սիսուան, Վենետիկ, 1885, էջ 385, Զ. Պ ո ղ ո ւ կ յ ա ն. Կիլիկյան Հայաստանի դրամները.– «Հանդես ամսօրյա», 1961, -1–12, էջ 58–59):*

[11] *Հումք մետաքսի ամենատարածված կշռի միավորը ֆարդելն էր: Ըստ Պեգոլոտիի՝ 1 ֆարդելը հավասար էր 80 կգ (*P e g o l o t t i, p. 300; С. К а р п о в. Итальянские морские республики..., с. 334*):*

[12] L. B a l l e t t o. *Նշվ. աշխ.,* B, N 17.

[13] V. L a n g l o i s. Le Trésor des chartes d'Arménie ou Cartulaire de la chancellerie royale des Roupéniens, Venise, 1863, p. 124; *Հայաստանի պատմության ատլաս, մաս Ա, հեղ. Բ. Հարությունյան, Երևան, 2004, էջ 76–77:*

[14] E. A s h t o r. The Economic Decline of the Middle East, p. 266.

[15] L. B a l l e t t o. *Նշվ. աշխ.,* B, N 43.

[16] P e g o l o t t i, p. 59, 297; Z i b a l d o n e d a C a n a l. Manoscritto Mercantile del sec. XIV, ed. A. Stussi, Venezia, 1967, p. 61; R. B a u t i e r. *Նշվ. աշխ., էջ 318;* D. J a c o b y. Dalla materia prima ai drappi tra Bisanzio, il Levante e Venezia: la prima fase dell'industria serica veneziana.– La seta in Italia dal Medioevo al Seicento. Dal baco al drappo, eds. Molà L., Mueller R. C., Zanier C., Venezia, Marsilio, 2000, p. 271.

դել Պունտան սկզբնաղբյուրներից դուրս է գրել Լուկա ներմուծված հումքային մետաքսի տեսակները, որոնց մեջ առանձնահատուկ տեղ է զբաղեցրել Կիլիկյան Հայաստանի Մամեստիա քաղաքի անունն ունեցող արտադրանքը[17]*: Ֆամագուստայում 1300 թ. դեկտեմբերի 13-ին կնքված պայմանագրում շրջանառվել է հատուկ Այասի անվանումը կրող մետաքս (*seta di Laiazzo*)*[18]*: 1309 թ. նոյեմբերի 19-ին կրկին Ֆամագուստայում կնքված մեկ այլ գործարքով Սիմոնինո Չեվոլա անունով մի վաճառական ձեռք էր բերել մեկ այլ Պերայից բերված տարատեսակ ապրանքներ, որպեսզի վաճառեր Այասում: Ապրանքների թվում նշված է «կավալի» անվանումով հումք մետաքսի մի տեսակ, որն այլ սկզբնաղբյուրներում չի հիշատակվում*[19]*:*

*Ղ. Ալիշանի «Սիսուանում» կարդում ենք. «… ընդ նմին և ազգ ինչ ոսկեճամուկ մետաքսեայ դիպակի. զի եթէ Սմբատ թագաւոր ի Վենետկոյ գնէր դիպակս ոսկեթելս (ինն փերթ) (յամի 1298) յընծայ սուլտանին, եղբայր նորա Օշին արքայ՝ յամին 1310 առաքէր ընծայ առ Դուքս Վենետկոյ դիպակս ոսկեթելս (*Drapis ad aurum *կամ* Drapis setae *գրեալ ի դիւանս Վենետկոյ)»*[20]*: Վենետիկյան սկզբնաղբյուրների մի արժեքավոր հավաքածուից տեղեկանում ենք, որ Կիլիկիայի Սմբատ արքային (1296–1298) կտոր վաճառած վենետիկցի առևտրականի անունը Մարկո Միքայել Լո Թաթարո է եղել: Փաստաթղթում նշված է, որ մեկ փերթ կամ կտոր ոսկեթել դիպակի դիմաց վճարվել էր 800 հ. ն. դ.*[21]*: Ոսկե թելերով զարդարված մետաքսյա կտորը և հագուստը կարող էին լինել և՛ եվրոպական, և՛ տեղական արտադրության: Ըստ իտալական սկզբնաղբյուրների՝ 1283 թ. վենետիկյան շուկաները հեղեղած ոսկեդիպակի (*samitti, xamittos et drapos omnes sete ultramarino*) ձեռքբերման գլխավոր աղբյուրներն Այասը և Աքքան էին*[22]*: Սկսած 1295 թ.՝ Եվրոպա ներմուծված ապրանքների ցանկում հայտնվել էր կիլիկյան Տարսոն քաղաքի անվանումն ունեցող մետաքսյա կտորը (*pannus tarsicus, pannus de Tarsico*)*[23]*: Անգլիայում 1328 թ. օտարերկրյա վաճառականներին տրված առևտրական շնորհագրերում բազմա-*

---

[17] I. D e l P u n t a. *Նշվ. աշխ., էջ 106, 109:*

[18] V. P o l o n i o. Notai genovesi in Oltremare. Atti rogati a Cipro da Lamberto di Sambuceto (6 luglio 1300 – 3 agosto 1301), Genova, 1983, N 149.

[19] M. B a l a r d. Notai genovesi in Oltremare. Atti rogati a Cipro da Lamberto di Sambuceto (31 marzo 1304 – 19 luglio 1305, 4 gennaio – 12 luglio 1307), Giovanni de Rocha (3 agosto 1308 – 14 marzo 1310), Genova, 1984, B, III N 28.

[20] L. A l i s h a n. L'Armeno-Veneto, Compendio Storico e Documenti delle Relazioni degli Armeni coi Veneziani, Primo periodo, secoli XIII–XIV, Parte II, Documenti, Venezia, 1893, p. 66–67, 133–134; *Ղ. Ա լ ի շ ա ն. նշվ. աշխ., էջ 369, 371:*

[21] Diplomatarium Veneto-Levantinum, v. 1, 1300–1350, ed. G. M. Thomas, R. Predelli, Venetiis, 1880, p. 38–39.

[22] A. B o n d i S e b e l l i c o. Felice de Merlis, prete e notaio in Venezia ed Ayas, 1315–1348, v. 1, Venezia, 1973, N 83 ; D. Jacoby. Silk Economics and Cross-Cultural Artistic Interaction, p. 234; C. O t t e n - F r o u x. Les relations économique entre Chypre et le Royaume Arménien de Cilicie d'après les actes notariés (1270–1320).– "L'Arménie et Byzance", Paris, 1996, p. 171; B. D i n i. I circuiti de commercio internazionale nel tardo Medioevo. Prodotti e tecniche d'oltremare nelle economie europee. Secoli XIII–XVIII.– Settimane di Studi, 29, Firenze, 1998, p. 653:

[23] D. J a c o b y. Silk Economics and Cross-Cultural Artistic Interaction, pp. 233–234.

թիվ ապրանքների կողքին տեղ էր գտել ջենովացիների կողմից ներմուծված միևնույն տարսոնյան մետաքսյա կտորեղենը[24]*: Միջնադարագետ Դ. Ջեյքոբին գտնում է, որ 1317 թ. Ֆրանսիա բերված ապրանքների ցանկում հանդիպող «թուրքական» անվանված ոսկե թելերով ասեղնագործված կտորը, ամենայն հավանականությամբ, արտադրված է եղել Կիլիկյան Հայաստանում և հյուսիսի թուրքական շրջաններում*[25]*: Սկզբնաղբյուրներում հանդիպում են նաև մետաքսյա բարձեր, շալ, վերարկուներ, դրամապանակներ և այլն*[26]*:*

Առավելապես արևելյան ծագում ուներ Դերբենդով ու Սև ծովով ներկայիս Ռուսաստանի տարածքներից և Ասիայի հեռավոր շրջաններից Կիլիկյան Հայաստան ներմուծված թանկարժեք մորթեղենը: Տարածված էին կզաքիսի, սամույրի, ջրասամույրի, սկյուռի, կուղբի, աղվեսի, վայրի կատվի մորթու տեսակները, որոնք վաճառվում էին ինչպես առանձին, այնպես էլ տարբեր հագուստների օժանդակ մասերի տեսքով: Հատկանշական է, որ թանկարժեք մորթեղենը խաչակրաց տիրույթներ հիմնականում ներկրվում էր Կիլիկյան Հայաստանի տարածքով[27]*:*

Միջազգային շուկայում մեծ հռչակ էր վայելում Կիլիկյան Հայաստանում նրբագեղմ այծի բրդից արտադրված գործվածքը՝ ցփսին. «Ընդ այծեմանց ի դէպ է իմանալ և զընտանին այծ ստնագեղ, որ ի հնումն յոյժ հռչակեալ էր, և մի ի նշանագոյն և շահաբեր ձեռագործաց վաճառուց երկրիս էր, յաւուրս մերոց պայազատաց՝ Ցփսի նոցին, յաճախ գնեալ յԻտալացւոց և կոչեցեալ ի նոցանէ Zambellotto *կամ* Ciambellotto*»*[28]*: Եվրոպացիների կողմից «կամելոտ» անվանված այս գործվածքը պատրաստում էին ոչ միայն այծի, այլև ուղտի ու ոչխարի բրդից: Կիլիկյան Հայաստանում ցփսիի արտադրության գլխավոր կենտրոնն Այասն էր*[29]*: Ի դեպ, տեղական արտադրության ծավալները չէին բավարարում այս ապրանքատեսակի մեծ պահանջարկը, որը լրացվում էր կիպրական ցփսիի հաշվին*[30]*:*

Կիլիկիայի շուկաներում վաճառվող եվրոպական ապրանքների հաշվեկշռում մահուդն առաջնային նշանակություն ուներ: Ինչպես եվրոպական շատ այլ ապրանքատեսակների պարագայում, Կիլիկյան Հայաստան

---

[24] M. E m i l e V i n c e n s. Histoire de la République de Gènes, t. 1, Paris, 1842, p. 384.

[25] D. J a c o b y. Silk Economics and Cross-Cultural Artistic Interaction, p. 234.

[26] L. B a l l e t t o. Notai genovesi in Oltremare, A, N 40; C. D e s i m o n i. Actes passés en 1271, 1274 et 1279 à l'AÎas (Petite Arménie) et à Beyrouth par devant des notaires génois.– Archives de l'Orient latin, t. I, Paris, 1881, p. 455 ; *Զ. Պ տ ռ ւ կ յ ա ն. նշվ. հոդվ., էջ 743–747,* E. D u l a u r i e r. Le Royaume de la Petite Arménie au temps des Croisades.– Recueil des historiens des croisades, Documents Arméniens, t. I, Paris 1869, p. CII–CIII.

[27] L. B a l l e t t o. *Նշվ. աշխ.,* A, N 105, B, N 7, 14, 72; E. R e y. Les colonies Franques de Syrie aux XIIme et XIIIme siècles, Paris, 1883, p. 208; R. D e l o r t. Le commerce des fourrures en Occident à la fin du moyen âge (vers 1300-vers 1450), École française de Rome, v. 1, Palais Farnèse, 1978, p. 259.

[28] *Ղ. Ա լ ի շ ա ն. նշվ. աշխ., էջ 31:*

[29] W. H e y d. *Նշվ. աշխ., էջ 704–705,* E. R e y. *Նշվ. աշխ., էջ 219,* M. G. C a n a l e. Nuova istoria della Republica di Genova, del suo commercio e della sua litteratura, dale origini all'anno 1797, v. 3, Firenze, 1860, p. 246.

[30] С. Б л и з н ю к. Мир торговли и политики в королевстве Крестоносцев на Кипре, 1192–1373. М., 1994, с. 110–113.

մահուդը գլխավորապես ներկրվում էր Կիպրոսից[31]*: Այասում կնքված գործարքներում հիշատակվում են միջնադարի եվրոպական մահուդի ամենահայտնի տեսակները՝ Իրիդայի, Իպրի, Ավինյոնի, Նարբոննայի, Ֆրանսիայի Շամպան երկրամասում գտնվող Շալոն կամ Յալոն քաղաքի բազմագույն ու տարատեսակ արտադրանքները և այլն*[32]*: 1277 թ. մի գործարքում հանդիպում ենք բարձրորակ մահուդի երկու տեսակ՝ 16 կտոր կարմիր գույնի, ծալքերով և 6 կտոր Սասնոյի կանաչ գույնի*[33]*: Բավական հայտնի էր նաև Իտալիայի Լոմբարդիա երկրամասի ձեռնարկությունների արտադրանքը*[34]*: XIII դ. վերջին և XIV դ. սկզբին Կիպրոսում գործած ջենովացի նոտարներ Լամբերտո դե Սամբուչետոյի և Ջիովաննի դե Ռոքայի հեղինակած յոթ պայմանագրում Կիլիկիա ուղարկված մահուդի և ուղտի բրդյա գործվածքների ընդհանուր արժեքը կազմել է 11.348 սպիտակ բյուզանդ*[35] *(կամ Կիպրոսից Կիլիկիա ուղղված բոլոր ներդրումների մոտ 8,5 %-ը): Դրանցում գերակշռում է ֆրանսիական մահուդը*[36]*: 1315 թ. հուլիսի 24-ին Պերայում կնքված գործարքով Կոստանդնուպոլսի բնակիչ Սալվետո դ'Աստին Անդրեա Մորինոյից ձեռք էր բերել մեծաքանակ ֆրանսիական մահուդ, որպեսզի այն վաճառեր Միսում*[37]*: Եվրոպական մահուդը Կիլիկյան Հայաստանով արտահանվում էր դեպի հյուսիս, ինչի մասին վկայում են Այասում կնքված նոտարական մի շարք գործեր: Դրանց մեծ մասում տեղափոխման ու վերավաճառման նպատակակետերը Սեբաստիա և Կոնիա քաղաքներն են եղել*[38]*:*

Կիլիկյան քաղաքներում մեծ սպառում ուներ եվրոպական կտավը, որոնցից հայտնի էին Ռեյմսի, Շամպանի, գերմանական, հյուսիսիտալական արտադրության և այլն[39]*: Եվրոպայում խոշորագույն, Ֆլորենցիայի*

---

[31] С. Б л и з н ю к. *Նշվ. աշխ., էջ 110–112:*

[32] L. B a l l e t t o. *Նշվ. աշխ.,* B, N 27, 29, 30, 31, 47, 50, 130, 134, 135, 136, 138; C. D e s i m o n i. *Նշվ. աշխ., էջ 530, 533–534,* E. D u l a u r i e r. *Նշվ. աշխ., էջ CII–CIII,* D. A b u l a f i a. Narbonne, the Lands of the Crown of Aragon.– Commerce and Conquest in the Mediterranean 1100–1500, Areat Yarmouth, Nonefalk, 1993, p. 196; *Նույնի՝* A Mediterranean Emporium: The Catalan Kingdom of Majorca, Cambridge, 2002, p. 182; H. L a u r e n t. Un grand commerce d'exportation au moyen âge: La draperie des Pays-Bas en France et dans les pays méditerranéens (XIIe–XVe siècle), Paris, 1935, p. 83, 106, 192.

[33] L. B a l l e t t o. *Նշվ. աշխ.,* B, N 49.

[34] *Նույն տեղում,* A, N 39, 51, B, N 1, 18, 51, 53, 80, C. D e s i m o n i. *Նշվ. աշխ., էջ 453–454, 460–461, 504–505:* C. O t t e n - F r o u x. *Նշվ. աշխ., էջ 170:*

[35] *Կիպրոսի թագավորության հիմնական դրամական միավորը՝ սպիտակ կոչված ոսկե բյուզանդը, կշռել է 3,87 գր: Ըստ Ղ. Ալիշանի՝ 27 սպիտակ բյուզանդին համարժեք էր 100 հայկական նոր դրամը (տե՛ս Ղ. Ա լ ի շ ա ն. նշվ. աշխ., էջ 383–385):*

[36] M. B a l a r d. Notai genovesi in Oltremare. Atti rogati a Cipro da Lamberto di Sambuceto (11 ottobre 1296 – 23 giugno 1299), Genova, 1983, A, N 2, 20, 23, 63; M. B a l a r d. Notai genovesi in Oltremare, B., II N 70, 73; V. P o l o n i o. *Նշվ. աշխ., N 91, 238,* C. O t t e n - F r o u x. *Նշվ. աշխ., էջ 165, 173,* С. Б л и з н ю к. *Նշվ. աշխ., էջ 110–112:*

[37] G. P i s t a r i n o. Dal decline sul mare di Levante tra cristiani ed islamici alla conquista del mar Nero.– Genovesi d'Oriente, a cura di Pistarino G., Genova, 1990, p. 117.

[38] L. B a l l e t t o. *Նշվ. աշխ.,* B, N 49, 50, 51, 135; C. D e s i m o n i. *Նշվ. աշխ., էջ 533:*

[39] L. B a l l e t t o. *Նշվ. աշխ.,* B, N 1, 7, 14, 49, 51, 53; V. P o l o n i o, *Նշվ. աշխ., N 363, 401, 404,* R. Pavoni. Notai genovesi in Oltremare. Atti rogati a Cipro da Lamberto di Sambuceto (6 luglio – 27 ottobre 1301), Genova, 1982, N 121; E. D u l a u r i e r. *Նշվ. աշխ., էջ CII–CIII:*

«Բարդի» բանկի գործակալ, միջնադարյան հեղինակ Ֆրանչեսկո Պեգոլոտտին հիշատակում է Այասում վաճառված երկու որակի կտավ՝ կանեփի կոշտ և վուշի[40]*: Ֆրանսիական կտավին վերաբերող առանձին կետ կա 1288 թ. Լևոն Բ-ի՝ ջենովացիներին շնորհած արտոնագրում. «... եւ զինչ իսկի ֆռանկ կտաւ ելնէ հաստ ու բարակ, ու զինչ իսկի քթան ելնէ հաստ ու բարակ, նայ տայ ի յրդտաբեռն նոր դրամ քսան ...»*[41]*: Արտահայտիչ է հետևյալ խոշոր գործարքը. 1277 թ. նոյեմբերի 22-ին Այասում Սիմոնե Լերկարին Անդրիոլո Դրոգոյից կոմմենդայի պայմանագրով ստանում էր 126 կտոր (*pezza*) շամպանյան կտավ, որը համարժեք էր 1460 ջենովական կանայի (4340,58 մ.)*[42]*: Մեկ այլ գործարքում շրջանառվել է կտավի էլ ավելի մեծ քանակություն՝ 229 կտոր*[43]*: Եվս մի սկզբնաղբյուրում 30 բրաչչո (մոտ 20,5 մ.) կտավը գնահատված է 90 հ. ն. դ.-ով*[44]*: Վաճառվում էր նաև կտավյա զգեստ*[45]*:*

Տեքստիլ տարատեսակ ապրանքների նման բազմերանգ տեսականին ևս մեկ անգամ փաստում է, որ XIII–XIV դդ. Կիլիկյան Հայաստանը դարձել էր միջերկրածովյան առևտրի կարևորագույն կենտրոններից մեկը, հատկապես, երբ խաչակրաց հենակետերն Արևելքում 1291 թ. վերջնականապես անկում ապրեցին: Փաստորեն, Այասում և կիլիկյան այլ նավահանգիստներում կարելի էր գնել ժամանակի եվրոպական տեքստիլ արտադրության ամենահայտնի և որակյալ ապրանքները: Ի դեպ, որոշ ապրանքներ կարող էին լինել թե՛ տեղական, և թե՛ եվրոպական ծագման: Գործարքներում շրջանառված էին նշյալ ապրանքների բավական մեծ ծավալներ, ինչը վկայում է ծավալուն ապրանքաշրջանառության մասին:

ТЕКСТИЛЬНАЯ ПРОДУКЦИЯ В МЕЖДУНАРОДНОЙ ТОРГОВЛЕ КИЛИКИЙСКОЙ АРМЕНИИ (XIII–XIV вв.)

ЗОГРАБ ГЕВОРГЯН

Резюме

С XIII века Киликийская Армения стала членом большой средиземноморской семьи и быстро внедрилась как в политические, так и в экономические процессы. Роль Киликийской Армении в торговле между Востоком и Западом выросла. Если из Азии в Европу отправлялись специи и сырьевые товары, то европейские купцы продавали на восточных рынках готовую продукцию, осо-

[40] Pegolotti, p. 59.

[41] *Զ. Պտուկյան. նշվ. աշխ., էջ 742:*

[42] L. Balletto. *Նշվ. աշխ.,* B, N 53.

[43] *Նույն տեղում,* B, N 49:

[44] *Այստեղ, ամենայն հավանականությամբ, օգտագործվել է բրաչչոյի վենետիկյան տեսակը, քանի որ բերված տվյալը քաղված է 1303–1304 թթ. վենետիկցիների կողմից Այասի բերդի թալանման և ապա 1307 թ. վնասների հատուցման համար կազմված ապրանքների ցանկից (տե՛ս Զ. Պտուկյան. նշվ. աշխ., էջ 744):*

[45] L. Balletto. *Նշվ. աշխ.,* B, N 47.

бенно текстильную. Богатый ассортимент текстильных товаров свидетельствует о том, что в XIII–XIV вв. Киликийская Армения являлась одним из главных центров средиземноморской торговли.

TEXTILES IN THE INTERNATIONAL TRADE OF CILICIAN ARMENIA
(The 13th–14th centuries)

ZOHRAB GEVORGYAN

S u m m a r y

Since the 13th century, Cilician Armenia had become a member of the great Mediterranean family, and was involved both in political and economic processes. The role of Cilician Armenia in the trade between the East and the West had grown. When spices and raw materials were transported from Asia to Europe, the European merchants sold in eastern markets ready products, especially textiles. A wide range of textile products shows that in the 13th–14th centuries Cilician Armenia was one of the main centers of the Mediterranean trade.